ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ
✆374 10 553310/116 +37493464789 gagik.ktryan@sportedu.am www.sportedu.am Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0070, Ա. Մանուկյան 11

«ՍՊՈՐՏՈՒՍ» ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՔՈԼԵՋԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի» Որակի ապահովման բաժինը 2024–2025 ուսումնական տարում իրականացրել է հարցում (հարցաթերթիկը՝ Հավելվածում), որի նպատակն է գնահատել «Սպորտուս» հենակետային քոլեջի գործունեության արդյունավետությունը՝ ՊԴ կազմի կարծիքների և առաջարկությունների հիման վրա:

Հարցումն իրականացվել է էլեկտրոնային եղանակով Google Forms հարթակի միջոցով: Հարցումն անանուն է, մասնակցել են քոլեջի 35 դասախոս, որը կազմում է թիրախային խմբի 81%-ը:

Հարցման արդյունքները ներկայացված են ստորև.

18.07.2025թ.

1. Մասնակիցների բաշխվածությունն ըստ կրթական ծրագրերի

Ֆիզիկական կուլտուրա և սպորտ	12
Զբոսաշրջություն	3
Թիկնապահական գործ	3
Բուժական մերսում	17



2. Ռեսուրսների և ենթակառուցվածքների գնահատում (1–5 միավոր, 1՝–ը ոչ բավարար, 5՝–ը գերազանց, ՉԱ–չեմ առնչվել, ԴՊ–դժվարանում եմ պատասխանել)

	1	2	3	4	5	ՉԱ	ԴՊ
Լսարանների բարեկարգ վիճակ	2	2	11	12	8	0	0
Մարզադահլիճների վիճակ	2	4	6	4	3	15	1
Ինտերնետ կապ	1	7	5	9	7	6	0
Պրոյեկտորով ապահովվածություն	5	9	7	5	4	3	2
Գրադարան	0	1	5	8	17	3	1
Ջեռուցում	6	7	7	8	6	1	0
Անվտանգության ապահովում	1	1	6	4	20	1	2
Բուժկետ	0	2	2	9	13	7	2



3. Ղեկավար կազմի կողմից տրամադրվող աջակցությունն ու հնարավորությունները (1-5 միավոր, 1-ը՝ ոչ բավարար, 5-ը՝ գերազանց, ՉԱ-չեմ առնչվել, ԴՊ-դժվարանում եմ պատասխանել)

	1	2	3	4	5	ՉԱ	ԴՊ
Ռեկտորի կողմից տրամադրվող աջակցություն	0	1	4	6	19	5	0
Քոլեջի տնօրենի կողմից տրամադրվող աջակցություն	0	1	3	7	20	3	1
Փոխտնօրենի կողմից տրամադրվող աջակցություն	1	3	2	2	27	0	0
Վերապատրաստման հնարավորություններ	1	5	3	5	15	5	1
Տեղական և միջազգային կոնֆերանսների մասնակցելու հնարավորություններ	4	7	3	6	5	9	1
Գործուղման հնարավորություններ	9	4	2	2	4	10	4



4. Աշխատանքային միջավայրի, կարգապահության և ինքնազարգացման հնարավորությունները

	1	2	3	4	5	ՉԱ	ԴՊ
Աշխատանքի կազմակերպում	2	1	4	12	16	0	0
Աշխատանքային կարգապահություն	1	2	6	9	17	0	0
Ինքնազարգացման հնարավորություն	3	5	5	9	11	0	2
Վարձատրություն	10	9	12	1	3	0	0
Աշխատանքային իրավունքների պաշտպանվածություն	2	1	8	9	13	2	0
Կոլեկտիվում աշխատանքային մթնոլորտ	1	1	4	5	23	0	0
Ազատ կարծիք արտահայտելու իրավունք	1	2	4	5	22	0	1
Որևէ խնդիր նկատելու դեպքում դրա բարձրաձայնման հնարավորություն	1	2	3	6	21	0	1


25
20
15
10
5
0
Աշխատանքի կազմակերպում
Աշխատանքային կարգապահություն
Ինքնազարգացման հնարավորություն
Վարձատրություն
Աշխատանքային իրավունքների պաշտպանվածություն
Կոլեկտիվում աշխատանքային մթնոլորտ
Ազատ կարծիք արտահայտելու իրավունք
Որևէ հնդհի նկատելու դեպքում, դրա բարձրաձայնման...
1 2 3 4 5 ՉԱ ԴՊ

5. Աշխատանքի արդյունավետությունը խթանող գործոնները



6. Վերապատրաստման կարիքների վերհանում



7. Քոլեջի ուժեղ և թույլ կողմերն ըստ մասնակիցների

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

- Համագործակցող կոլեկտիվ,
- Ղեկավարության աջակցությունը դասախոսներին և ուսանողներին,
- Ղեկավարության աջակցությունը,
- Բանիմաց անձնակազմ և հաճելի միջավայրը,
- Լավ մթնոլորտը, դասախոսական կազմը լավն է,
- Դասախոսների համակարգված աշխատանքը,
- Հոգատարությունը ուսանողների նկատմամբ,
- Աշխատանքային մթնոլորտը,
- Խստություն, պահանջկոտությունը,
- Միասնական թիմային աշխատանքը,
- Լավ մթնոլորտը,
- Աշխատանքը շատ կազմակերպված է,
- Ջերմ մթնոլորտը,
- Ընդունելության պահանջարկ, դասախոսական կազմը,
- Խստությունը,
- Առողջ կոլեկտիվը,
- Աշխատանքային առողջ մթնոլորտը,
- Վերահսկող աջակցությունը,
- Համախմբվածությունը,
- Դժվարանում եմ պատասխանել,
- Միասնականությունը,
- Միասնականության, միմյանց օժանդակելու պատրաստակամության առկայությունը,
- Համախմբվածությունը,
- Շատ լավ կոլեկտիվ,
- Առողջ մթնոլորտ, լավ կոլեկտիվ
- դասընթացի կազմակերպումը,
- Բարեխիղճ տնօրինությունը,

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

- Լսարանների պակասը,
- Լսարանների սակավության խնդիրը և պրոյեկտորների բացակայությունը,
- Ուսանողների անլուրջ վերաբերմունքը կրթությանը,
- Դասագրքերի բացակայությունը,
- Թույլ կողմերից մեկը սեփական լսարանների բացակայությունն է,
- Թույլ կողմ չեմ տեսել,
- Լսարանների խնդիրը՝ եթե հնարավոր լինի միայն մասնաշենքի մի բլոկում, լիֆտը չկիրառելու համար:
- Ցածր աշխատավարձը,
- Լսարանների բացակայություն, ցածր աշխատավարձ, աշխատող անձնակազմը,
- Ուսանողների բացակայությունը,
- Լսարանների հագեցվածությունը թույլ է,
- Փաստաթղթաշրջանառության ձևաչափի տարբեր մոտեցումները,
- Ուսանողների (շատերի մոտ) անտարբերությունը ուսման նկատմամբ,
- Սովորողների կարգապահության և վարքագծի ցածր մակարդակը,
- Նյութատեխնիկական բազան,
- Փոխտնօրենների անկազմակերպ ու սուբյեկտիվ աշխատանքը, իրենց անկազմակերպ թերացումները

- Անվտանգության կազմակերպումը անվտանգության աշխատակիցների շնորհիվ,
- Պատրաստված դասախոսները,
- Անվտանգությունը,
- Պրոֆեսիոնալ և համախմբված աշխատակազմ:
- դասախոսների վրա բարդելու սովորությունը, ոչ կոռեկտ և անտեղի քննարկումները և կոնֆլիկտային պահվածքը,
- Ցածր աշխատավարձը:

8. Դիտողություններն ու առաջարկությունները քոլեջում ուսումնական գործընթացը բարելավելու ուղղությամբ

Չունեմ

Դասագրքեր

Չկան

Ավելի հետևողական լինել ուսանողների բացակայություններին:

կահավորել լսարանը նորարարական տեխնոլոգիաներով, որպեսզի դասն լինի ավելի հետաքրքիր և արդյունավետ

Այսօր մենք կանգնած ենք այնպիսի ժամանակի առաջ, երբ կրթությունը պետք է դառնա ոչ միայն փաստաթղթի, այլ իրական գիտելիքի աղբյուր: Հաճախ ուսանողը ավարտում է քոլեջը, ստանում է դիպլոմ, բայց չունի այն գիտելիքը, որը պահանջում է աշխատաշուկան: Այլևս բավարար չէ գնահատական նշանակել միայն ներկայության կամ ինչ-որ տեսական աշխատանքի համար: Պետք է գնահատել ըստ գիտելիքի յուրացման մակարդակի, գործնական կիրառման կարողության: Պետք է ուսանողին հասկացնենք, որ մասնագետ դառնում են ոչ թե թղթի, այլ իմացության շնորհիվ: Մանավանդ մարքեթինգի նման արագ զարգացող ոլորտում ուսուցումը չի կարող արդյունավետ լինել առանց ժամանակակից տեխնիկայի: Ինչպե՞ս կարելի է ուսուցանել թվային մարքեթինգ, եթե ուսանողը չունի սմարթֆոն կամ համակարգիչ: Ինչպե՞ս վերլուծել շուկան, վարել սոցիալական ցանցեր, ստեղծել գովազդային բովանդակություն, եթե չունենալու ենք համապատասխան գործիքներ: Այդպես մարքեթինգը մնում է միայն թղթի վրա, դառնում է անիմաստ տեսություն: Հետևաբար, շատ կարևոր է, որ քոլեջը համալրված լինի անհրաժեշտ տեխնիկայով ու ծրագրային միջոցներով, որպեսզի ուսանողը սովորի գործնական եղանակով՝ ստեղծել բովանդակություն, վերլուծել տվյալներ, կառավարել սոց. մեդիա հարթակներ, փորձարկի իրական գովազդային արշավներ: Ուսանողը պետք է գործի, ոչ թե միայն լսի: Ուզում եմ հատկապես ընդգծել. երբ ուսանողը տեսնում է, որ իր աշխատանքը գնահատվում է ոչ թե ձևական, այլ ըստ արդյունքի,

ըստ գիտելիքի խորության՝ նա սկսում է իսկապես սերտել: Մենակ տեքստով կամ դասագրքով հնարավոր չէ դառնալ մարքեթոլոգ: Պետք է ունենալ միջավայր, որտեղ ուսանողը փորձի, սխալվի, վերլուծի, ու ի վերջո՝ զարգանա:

Քոլեջը պետք է առանձին ունենա մարզադահլիճներ, որպեսզի էֆեկտիվ անցկացնի սպորտային դասընթացները, ավելի շատ պրաեկտրներով լսարաններ հատկացվի:

Բարելավել ծրագրերը և բարձրացնել աշխավարձերը:

Քոլեջը պետք է ապահովված լինի շարժական պրոեկտորներով դասապրոցեսը ժամանակակից մեթոդներով անցկացնելու համար:

Ուսանողների անտարբերությունը դասերի վերաբերյալ

Ադմինիստրատիվ անձնակազմի կողմից ցոցաբերվում է շատ համակարգված մոտեցում և աշխատանք, աջակցություն նրանց բոլոր առաջացող հարցերում:

Առաջարկում եմ ունենալ տեխնիկապես հագեցած լսարաններ

70 րոպե դասի տևողությունը աշակերտների համար հանրակրթական դպրոցի 45 րոպե դասաժամից հետո դժվար է ադապտացնել

Անհրաժեշտ է կազմակերպել դասախոսների խրախուսման մեխանիզմներ՝ մասնագիտական վերապատրաստումներ, ներբուհական մրցույթներ, հավելավճարներ՝ ըստ արդյունավետության: Ներդնել արդիական տեխնոլոգիաների կիրառում, ուսանողական հետադարձ կապի համակարգ՝ ուսանողների կարծիքների հավաքագրում և դրանց հիման վրա որոշումների ընդունում:

Համակարգչային կաբինետի տրամադրում

Կարծում եմ, կարևոր կլիներ բոլոր դասաժամերին սաները ունենային հստակ լսարանային զբսղվածություն: Շատ գոհ եմ փոխտնօրենների աշխատանքից:

Ուսանողների հաճախելիության բարձրացում

Լսարանների հագեցում

Թվային գրատախտակի առկայություն

Դժվարանում եմ պատասխանել

Ditoxutyner chunem

Ուսումնական պրոցեսի բարելավման համար կառաջարկեի քոլեջում հստակեցնել օրացուցային պլանների, թեմատիկ պլանների առկայության փաստը, կրճատել դատախազի տևողությունը, քանի որ կարծում եմ քոլեջի ուսանողի համար (16-18 տարեկան) 70 րոպե չափազանց երկար է ու ոչ արդյունավետ, ինչպես նաև ուսանողներին նյութերի տրամադրման համար անհրաժեշտ է ստեղծել ընդհանուր տեղեկատվական հարթակ՝ որտեղ տեղադրված կլինեն առարկային վերաբերող և օրացուցային պլանով նախատեսված բոլոր նյութեր, նաև սահմանել վերահսկողություն ուսանողների մուտքի հաճախականության մասով տվյալների հարթակ:

Ազատվել չսովորող և անկարքապահ ուսանողներից

Ապահովել գրքերով, դիտակտիկ նյութերով

1. Դիսցիպլինա՝ ուսանողների հաճախումների հետ կապված: 2. Ուսումնական պրոցեսին անհրաժեշտ գույքային միջոցների համալրում և բարելավում՝ գրատախտակ, կավիճ, մարկեր, ջնջոց, պրոյեկտոր:

Չկա

Ընդունելության ժամանակ առավել խստապահանջ լինել գիտելիքների իմացության նկատմամբ

Աշխատավարձի բարձրացում, նյութատեխնիկական բազայի հարստացում

Գտնել փորձառու, տեղեկացված և հմուտ փոխտնօրեններ

N/A

Ուսումնական գործընթացը լավ է կացմակերպված:

դիտողություններ և առաջարկություններ չունեմ

Դասաժամերը շատացնել

1. Աշխատանքային համագործակցություն մարզական կազմակերպությունների հետ 2. Հրավիրվել ոլորտում հայտնի մարզիչներ, ֆիզիոթերապևտներ, սպորտային հոգեբաններ՝ ուսանողներին ներկայացնելու ոլորտի նորագույն միտումները և մոտեցումները: 3. Ուսանողների մոտիվացիայի բարձրացման նպատակով կազմակերպել «Լավագույն ուսանող», «Լավագույն մարզիչ-ուսանող» ծրագրեր՝ խրախուսելու գերազանց առաջադիմությունը և ակտիվ մասնակցությունը: 4. Քոլեջի սպորտային և նյութատեխնիկական բազայի զարգացում:

ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հարցումը, որին մասնակցել են քոլեջի 35 դասախոս (81% մասնակցություն), նպատակ ունի պարզելու ուսումնական միջավայրի, ռեսուրսների, ղեկավարության աջակցության և աշխատանքի կազմակերպման հիմնական խնդիրներն ու կարիքները: Վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմնական դժգոհությունները վերաբերում են **նյութատեխնիկական հագեցվածությանը, ցածր աշխատավարձին, ուսանողների կարգապահությանը և տեխնիկական հագեցվածության պակասին**: Դրական արձագանքները վերաբերում են **աշխատանքային մթնոլորտին և ղեկավարության աջակցությանը**:

Հիմնական խնդիրները և ցուցանիշների համեմատություն

1. Նյութատեխնիկական ապահովվածություն

- Լսարանների և մարզադահլիճների վիճակը միջինից ցածր է գնահատվել (հիմնականում 3–4 միավոր, իսկ մարզադահլիճների դեպքում՝ 15 «ՉԱ» պատասխան):
- Պրոյեկտորների և տեխնիկայի բացակայությունը կրկնվում է թե՛ գնահատականներում, թե՛ բաց գրավոր դիտողություններում («թույլ կողմերից» ամենահաճախ հիշատակվող կետը):

Կապակցվածություն. Տեխնիկական ապահովվածության խնդիրը անմիջականորեն կապվում է ուսումնական գործընթացի արդիականացման պահանջին (մասնավորապես թվային մարքեթինգի, սոցիալական մեդիայի և գործնական հմտությունների դասընթացների արդյունավետության հետ):

2. Աշխատավարձի և խրախուսման պակաս

- Վարձատրության գնահատականները հիմնականում ցածր են. 10 և 9 մասնակցի կողմից 1 և 2 միավորներ են տրվել, ընդամենը 3 հոգի են տվել 5 միավոր:
- Թույլ կողմերի և առաջարկությունների բաժնում աշխատավարձի ցածր մակարդակը բազմիցս նշվել է:

Կապակցվածություն. Վարձատրության խնդիրը միահյուսվում է գնահատման և խրախուսման մեխանիզմների բացակայության հետ. առաջարկվում են հավելավճարներ և մրցույթներ՝ արդյունավետությունը խթանելու համար:

3. Ուսանողների կարգապահություն և մոտիվացիա

- Թույլ կողմերի բաժնում կրնկվել են ուսանողների **դասերի հանդեպ վերաբերմունքի խնդիրը, բացակայությունները և կարգապահական խնդիրները**:
- Առաջարկներում շեշտվում է խստացված վերահսկողություն, կարգապահական քաղաքականության խստացում և մոտիվացիոն ծրագրերի ներդրում (օր. «Լավագույն ուսանող» մրցույթներ):

Կապակցվածություն. Ուսանողների մոտիվացիայի բարձրացումը դիտվում է ոչ միայն կարգապահական վերահսկողության, այլև ժամանակակից տեխնոլոգիաներով, գործնական ծրագրերով և համագործակցության միջոցով:

4. Վերապատրաստման և զարգացման սահմանափակ հնարավորություններ

- Վերապատրաստման հնարավորությունները գնահատվել են համեմատաբար թույլ (1–5 բալերի լայն տիրույթով, ընդամենը 15 բարձր գնահատական):
- Առաջարկվում է **խրախուսման և վերապատրաստման համակարգ**՝ ներբուհական մրցույթներ, արդյունավետության հիման վրա հավելավճարներ, արտասահմանյան կոնֆերանսների հասանելիություն:

Դրական կողմերը

Հարցման մասնակիցների մեծ մասը դրական է գնահատել.

- **Առողջ աշխատանքային մթնոլորտը և համախմբված կոլեկտիվը** (առավել հաճախ հիշատակվող ուժեղ կողմը):
- **Ղեկավարության աջակցությունը՝** ռեկտորի, տնօրենի և փոխտնօրենների (մասնավորապես փոխտնօրենների՝ 27 բարձրագույն գնահատական):

Առաջարկվող լուծումներ

1. **Նյութատեխնիկական բազայի հզորացում**
   - Լսարանների վերանորոգում և կահավորում նոր տեխնոլոգիաներով (պրոյեկտորներ, թվային գրատախտակներ, համակարգիչներ):
   - Առանձին մարզադահլիճների տրամադրում սպորտային դասընթացների արդյունավետության համար:
2. **Վարձատրության և խրախուսման բարեփոխումներ**
   - Մշակել համակարգ, որտեղ վարձատրությունը կապվում է դասախոսների արդյունավետության և վերապատրաստման մասնակցության հետ:
   - Ներդնել հավելավճարների, մրցույթների և պարգևների մեխանիզմներ:
3. **Ուսանողների կարգապահության և մոտիվացիայի բարձրացում**
   - Վերահսկողության խստացում և բացակայությունների սահմանափակում:
   - Մոտիվացիոն ծրագրեր («Լավագույն ուսանող», ոլորտի մասնագետների հրավերք, գործնական նախագծեր):
4. **Վերապատրաստման և զարգացման հնարավորությունների ընդլայնում**
   - Մասնագիտական վերապատրաստումներ, սեմինարներ և միջազգային կոնֆերանսների հասանելիություն:
   - Դասախոսների հմտությունների զարգացում՝ ժամանակակից ուսուցման մեթոդներով:

Եզրակացություն

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ քոլեջի պրոֆեսորադասախոսական կազմի հիմնական կարիքները վերաբերում են **նյութատեխնիկական բազայի հզորացմանը, աշխատավարձի և խրախուսման բարելավմանը, ուսանողների կարգապահության ամրապնդմանը և վերապատրաստման հնարավորությունների ընդլայնմանը**: Միևնույն ժամանակ, **աշխատանքային մթնոլորտը և ղեկավարության աջակցությունը պահպանվում են որպես հաստատության ուժեղ կողմեր**, ինչը հնարավորություն է տալիս բարեփոխումները իրականացնել առանց կառույցի ներքին հակասությունների:

Կենտրոնանալով վերոնշյալ չորս առաջնահերթ ուղղությունների վրա՝ հնարավոր է բարելավել ուսումնական գործընթացի արդյունավետությունը և դասախոսական կազմի գոհունակությունը:

Հավելված

ՀԱՐՑԱՇԱՐ

1. Նշեք որ կրթական ծրագրում եք դասավանդում:

2. Ռեսուրսների և ենթակառուցվածքների գնահատում (1-5 միավոր, 1-ը՝ ոչ բավարար, 5-ը՝ գերազանց, ՉԱ-չեմ առնչվել, ԴՊ-դժվարանում եմ պատասխանել):

3. Գնահատեք ղեկավար կազմի կողմից տրամադրվող աջակցությունն ու հնարավորությունները (1-5 միավոր, 1-ը՝ ոչ բավարար, 5-ը՝ գերազանց, ՉԱ-չեմ առնչվել, ԴՊ-դժվարանում եմ պատասխանել):

4. Գնահատեք քոլեջում հետևյալ բաղադրիչները (1-5 միավոր, 1-ը՝ ոչ բավարար, 5-ը՝ գերազանց, ՉԱ-չեմ առնչվել, ԴՊ-դժվարանում եմ պատասխանել):

5. Ի՞նչը կարող է խթանել Ձեզ ավելի արդյունավետ աշխատելու համար (կարող եք նշել պատասխանի մի քանի տարբերակ):

6. Ի՞նչ թեմայով կցանկանայիք վերապատրաստվել (կարող եք նշել պատասխանի մի քանի տարբերակ):

7. Խնդրում ենք գրել քոլեջի մեկական ուժեղ և թույլ կողմ:

8. Խնդրում ենք գրել Ձեր դիտողություններն ու առաջարկությունները քոլեջում ուսումնական գործընթացը բարելավելու ուղղությամբ: